Ժողովրդավարության
և անվտանգության
տարածաշրջանային կենտրոն

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

Հայաստանի կառուցվածքային կախվածությունը Ռուսաստանից. առևտուր, էներգետիկա, անվտանգություն

Հեղինակներ՝

Էդուարդ Առաքելյան, Կարինա Ավետիսյան, Տիգրան Գրիգորյան

Հրապարակման բովանդակության համար բացառապես պատասխանատու է Ժողովրդավարության և անվտանգության տարածաշրջանային կենտրոնը, և այն որևէ կերպ չի կարող արտացոլել Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետները:

Հայաստանի կառուցվածքային կախվածությունը Ռուսաստանից. առևտուր, էներգետիկա,

1. Ներածություն

Հայաստանի հարաբերությունները նախկինում վերջինիս ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ այժմ փոխվել են՝ Ռուսաստանին որպես թշնամական դերակատար դիտելու ուղղությամբ: Այս փոփոխությունը պայմանավորված է 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմում հրադադարի հաստատումից հետո Ռուսաստանի անվտանգային ձախողումներով: Հարաբերությունները հետագայում Է՛լ ավելի վատթարացան 2022 թվականին Հայաստանի և 2023 թվականին Լեռնային Ղարաբաղի վրաԱդրբեջանի հարձակումներից հետո, ինչը հանգեցրեց այդ տարածքում բնակվող հայերի էթնիկ զտումներին՝ չնայած ռուս խաղաղապահների ներկայությանը:

Ավելին, Հայաստանի հետ հակամարտության ֆոնին Ռուսաստանի աճող մերձեցումն Ադրբեջանի հետ ավելի է նպաստել Ռուսաստանի՝ որպես թշնամական պետություն ընկալմանը: Ի պատասխան՝ Հայաստանն ակտիվորեն դիվերսիֆիկացնում է իր քաղաքական կապերը՝ ամրապնդելով հարաբերություններն Արևմուտքի հետ:

Չնայած այս քաղաքական տեղաշարժերին, Հայաստանի կառուցվածքային կախվածությունը Ռուսաստանից պահպանվում է, իսկ որոշ ոլորտներում՝ նույնիսկ խորանում: Սա հատկապես ակներև է այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը և էներգետիկան: Թեև անվտանգային իրավիճակը, քաղաքական զարգացումներով պայմանավորված, փոխվում է, անցյալում անվտանգության ապահովման հարցում Ռուսաստանից չափազանց մեծ կախվածության հետևանքները դեռևս պահպանվում են և պետք է ուսումնասվեն: Կախվածության այս երեք հիմնական ոլորտները՝ առևտուր, էներգետիկա և անվտանգություն, ամրագրված են Ռուսաստանի գլխավորած տարածաշրջանային կառույցներին

Հայաստանի անդամակցությամբ, ինչպիսիք են՝ Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ) և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ):

Միայն մեկ երկրից գերկախվածությունն այնպիսի էական պետական գործառույթների հարցում, ինչպիսիք են առևտուրը, էներգետիկան և անվտանգությունը, խոցելիություն է ստեղծում մատակարարների ճնշման, առևտրային ցնցումների և զարգացման անտեսման առումով (Համաշխարհային բանկ, 2019թ., էջ 136): ԱՄՆ վարկանիշային Fitch գործակալությունը Հայաստանի 2024 թվականի հունվարի վարկանիշում նշել է, որ Հայաստանի տնտեսությունը շարունակում է «խիստ կախվածություն ունենալ Ռուսաստանից առևտրի և էներգետիկայի ոլորտներում» և հայտարարել է, որ մոտ ապագայում «Ռուսաստանից նշանակալի դիվերսիֆիկացիա» չի սպասվում (Fitch Ratings, 2024թ.): Առաջարկությունները ներառում են մատակարարների դիվերսիֆիկացումը և ներքին ռեսուրսների զարգացումը: Այնուամենայնիվ, դիվերսիֆիկացիան շարունակում է մարտահրավեր հանդիսանալ հատկապես դեպի ծով ելք չունեցող փոքր երկրների համար, ինչպիսին է Հայաստանը (Համաշխարհային բանկ, 2019 թ.):

Ռուսաստանից գերկախվածությունը խոցելիություններ է ստեղծում: Օրինակ՝ 2023 թվականի նոյեմբերին և 2024 թվականի հուլիսին ռուսական պետական գերատեսչությունն ավելի քան մեկ շաբաթով արգելափակել էր հայկական բազմաթիվ պարենային ապրանքների ներմուծումը: Այս ակցիան էականորեն ազդել է տասնյակ հազարավոր հայ ֆերմերների և ջերմոցների սեփականատերերի վրա, ովքեր մեծապես կախված են ռուսական շուկայից (Ազատություն ռադիոկայան, 2023թ., Սարիբեկյան, 2024 թ.): Պաշտոնական բացատրությունը, որը վկայակոչում է արտադրանքի որակի հետ կապված մտահոգությունները, կասկածահարույց է, և այդ քայլը կարելի է մեկնաբանել որպես քաղաքական նախազգուշացում ընդդեմ Հայաստանի դեպի Արևմուտք շրջվելուն: Անկախ մտադրությունից՝ այս միջադեպը բացահայտում է զգալի խոցելիություն, որը կարող է չարաշահվել:

Այս հետազոտական աշխատանքն ուսումնասիրում է Ռուսաստանից Հայաստանի հիմնական կախվածությունները (առևտուր, էներգետիկա

և անվտանգություն) և այն, թե որքանով դրանք կարող են իրատեսորեն հասցեագրվել կամ մեղմվել: Գոյություն ունեն քաղաքականություններ, որոնք կարող են կիրառվել այս խնդրի լուծման համար, և սույն հետազոտությունն ուսումնասիրում է նաև դրանք: Հայաստանում ռուսական ազդեցության նպատակն է լուծել Հայաստանում Ռուսաստանի կողմից վերահսկվող առանցքային նշանակության ոլորտների խորը և համակարգված վերլուծության բացակայության հարցը: Նպատակը Հայաստանի ռազմավարական ինքնավարության և աշխարհաքաղաքական ազդեցության առումով Ռուսաստանից գերկախվածությունից բխող կոնկրետ սպառնալիքների գնահատումն է: Հետազոտության նպատակն է նաև

առաջարկություններ տրամադրել այդ կախվածությունները վերացնելու և մեղմելու համար:

2. Իրավիճակի նկարագրություն | Առևտուր

Ռուսաստանի հետ Հայաստանի առևտրային հարաբերությունները խորապես փոխկապակցված են և ներառում են ապրանքների, ծառայությունների և տրանսֆերտների զգալի հոսքեր:Երկու երկրների միջև երկարամյա առևտրային կապերն ամրապնդվել են 2015 թվականից ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությամբ: Այս անդամակցությունը մեծացրեց տնտեսական ինտեգրացիան՝ Ռուսաստանը դարձնելով Հայաստանի խոշորագույն առևտրային գործընկերը:

Վերջին տարիներին Հայաստանի և Ռուսաստանի միջև երկկողմ առևտրի մասշտաբները կտրուկ աճ են գրանցել: 2022 թվականին երկկողմ առևտրաշրջանառությունը գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 5,3 միլիարդ ԱՄՆ դոլարի, ընդ որում Հայաստանի արտահանումը Ռուսաստան եռապատկվել է՝ 2021 թվականին 850 միլիոն ԱՄՆ դոլարից հասնելով 2,4 միլիարդ ԱՄՆ դոլարի (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2022 թ.), ինչը կազմում է Հայաստանի ընդհանուր արտահանման 51%-ը (Սիվիլնեթ, 2023թ.): 2023 թվականին երկկողմ առևտուրն աճել է մինչև 7,3 միլիարդ ԱՄՆ դոլար (Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե), ընդ որում

Ռուսաստանին բաժին է ընկնում Հայաստանի արտաքին առևտրի ավելի քան մեկ երրորդը (Fitch Ratings, 2024թ.): Հայաստանի արտահանումը ԵԱՏՄ անդամ երկրներ այս ժամանակահատվածում կազմել է 3,3 մլրդ ԱՄՆ դոլար (Արմենպրես, 2024թ.)՝ գերազանցելով նախորդ տարվա արտահանման ամբողջ ծավալը: Սակայն այս աճը մասամբ պայմանավորված է Ռուսաստան ապրանքների վերաարտահանմամբ: Քանի որ ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված պատժամիջոցների պատճառով արևմտյան շուկաներն ավելի անհասանելի էին դառնում Ռուսաստանի համար, Հայաստան արտահանման կտրուկ աճ գրանցվեց, ինչը միայն մեծացրեց տնտեսական կախվածությունն այդ երկրից:

Հայաստանը Ռուսաստան է արտահանում գյուղմթերք, տեքստիլ և թանկարժեք մետաղներ՝ միաժամանակ ներմուծելով էներգետիկ ռեսուրսներ, սարքավորումներ և պարենամթերք: Ռուսական շուկան շարունակում է մնալ ինչպես հայկական արտահանման, այնպես էլ ներմուծման հիմնական ուղղությունը՝ ընդգծելով Ռուսաստանի կարևոր դերը Հայաստանի առևտրային էկոհամակարգում:

Առևտրային հարաբերությունները հավասարակշռելը և առանց սեփական տնտեսական կայունությանը վնաս հասցնելու Ռուսաստանից իր մեծ կախվածությունը նվազեցնելը մարտահրավեր են հանդիսանում Հայաստանի համար: Մինչ Հայաստանն ընդլայնում է իր առևտրատնտեսական հարաբերություններն այլ գործընկերների (տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե), հատկապես արաբական երկրների հետ, ինչպիսիք են Արաբական Միացյալ Էմիրությունները[1], որոնց մեծ մասը պայմանավորված է ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով առաջացած վերաարտահանմամբ, Ռուսաստանի հետ առևտրատնտեսական հարաբերությունները շարունակում են գերիշխող մնալ:

[1] Արաբական երկրների հետ Հայաստանի առևտրաշրջանառությունը 2023 թվականին հասել է 2,56 միլիարդ դոլարի, ընդ որում ԱՄԷ-ն գերակշռում է 90%-ով, իսկ Իրաքը՝ 7%-ով (ՀՀ վիճակագրական կոմիտե): ԱՄԷ-ն նույնպես ներդրումներ է կատարում Հայաստանի տնտեսության մեջ, որտեղ Մասդարը 174 միլիոն դոլար է հատկացրել Շիրակի 200 մեգավատ հզորությամբ արևային a համար, թեև շինարարությունը դեռ չի սկսվել (Նազարեթյան, 2024 թ.)

Էներգետիկա

Ունենալով ներքին սահմանափակ ռեսուրսներ՝ Հայաստանն իր էներգետիկ կարիքների համար մեծապես կախված է տարբեր աղբյուրներից՝ ածխաջրածիններից, ատոմային էներգիայից, ջերմային էներգիայից, հիդրոէլեկտրաէներգիայից, իսկ ավելի փոքր մասը՝ վերականգնվող աղբյուրներից: Էներգետիկ առումով Հայաստանը մեծապես կախված է ռուսական գազից և նավթից, կախվածություն, որը բնութագրվել է որպես կառուցվածքային, կարճաժամկետ փոխարինման դժվարությամբ (Չերվյակով և Ջուչի, 2023թ.): 2023 թվականին Հայաստանը Ռուսաստանից ներմուծել է իր բնական գազի 86,6%-ը (ԱրմԻնֆո, 2024ա): Բացի այդ, Հայաստան ներկրվող բենզինի 70%-ը ձեռք է բերվել Ռուսաստանից (ԱրմԻնֆո, 2024բ): [2]

Հայաստանն արտադրում է սեփական էլեկտրաէներգիայի զգալի մասը, ինչն առաջին հայացքից կարող է շահավետ թվալ: Այնուամենայնիվ, իրականությունն ավելի բարդ է, քանի որ այս էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է բնական գազից և միջուկային էներգիայից, որոնք երկուսն էլ մեծապես կախված են Ռուսաստանից: Մեծամորի ատոմակայանը[3], Հայաստանի էլեկտրաէներգիայի առանցքային աղբյուրը, աշխատում է ռուսական տեխնոլոգիաներով և միջուկային վառելիքով, ինչը խորացնում է այդ կախվածությունը: Բացի այդ, Հայաստանի էներգետիկ համակարգը սերտորեն կապված է Ռուսաստանի հետ, և հիմնական ակտիվները, այդ թվում՝ խողովակաշարերը Հայաստանում, կառավարվում են «Գազպրոմ Արմենիա»-ի կողմից, որը ռուսական պետական «Գազպրոմ»-ի դուստր ձեռնարկությունն է հանդիսանում: Նման խորը ինտեգրումը խաթարում է Հայաստանի էներգետիկ անվտանգությունը և լրջորեն սահմանափակում անկախ էներգետիկ քաղաքականություն մշակելու վերջինիս հնարավորությունները:

---

[2] Բնական գազի մեծ մասը ներկրվում է Ռուսաստանից Վրաստանի տարածքով խողովակաշարով, մինչդեռ հավելյալ մատակարարումները կատարվում են Իրանից՝ փոխանակման համաձայնագրի համաձայն, որի համաձայն Հայաստանը դրա դիմաց էլեկտրաէներգիա է արտահանում:

[3] Մեծամորի ատոմակայանը պետք է շահագործումից հանվի 2036 թվականին, և այժմ աշխատանքներ են տարվում նոր կայանի կառուցման ուղղությամբ:

Թեև Հայաստանը սահմանափակ էլեկտրաէներգիայի առևտուր է իրականացնում Վրաստանի հետ, սակայն վերջիններիս ցանցերի ոչ սինքրոնացված բնույթը սահմանափակում է փոխանակման ծավալը (հարցված 3)։ Ամենաերկար փակ սահմաններն ունենալով Թուրքիայի և Ադրբեջանի հետ, Հայաստանի աշխարհագրական մեկուսացումը նրան քիչ այլընտրանքներ է թողել՝ վերջինիս էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից դարձնելով ոչ թե ընտրություն, այլ անհրաժեշտություն։

Անվտանգություն

1990-ականներից ի վեր Հայաստանը, որպես անվտանգության իր հիմնական երաշխավորի, մեծապես ապավինում էր Ռուսաստանին։ Հարաբերություններ, որոնք ձևավորվել են ելնելով պատմական կապերից, աշխարհաքաղաքական սահմանափակումներից և տարածաշրջանային հակամարտություններից։ Ռուսաստանի ռազմական ներկայությունը Հայաստանում և վերջինիս դերը՝ որպես Հայաստանի սպառազինության հիմնական մատակարարի, առանցքային դերակատարում են ունեցել այս գործում։ Այս կախվածությունը սահմանափակել է Հայաստանի արտաքին քաղաքական ինքնավարությունը և բարդացրել վերջինիս հարաբերությունները համաշխարհային այլ տերությունների հետ։

Ղարաբաղյան առաջին պատերազմից սկսած Հայաստանն անվտանգության հարցում կախված էր Ռուսաստանից՝ հաշվի առնելով սպառնալիքները Թուրքիայից և Ադրբեջանի հետ շարունակվող հակամարտությունը։ Նկատի ունենալով պոտենցիալ վտանգը Թուրքիայից, Հայաստանը պաշտոնականացրել է իր հարաբերությունները Ռուսաստանի հետ անվտանգության ոլորտում այնպիսի համաձայնագրերի միջոցով, ինչպիսիք են հայ-թուրքական սահմանի համատեղ պահպանության վերաբերյալ համաձայնագիրը (1994թ.), Գյումրիի ռուսական ռազմաբազայի վերաբերյալ պայմանագիրը (1995թ.), Բարեկամության, համագործակցության և փոխօգնության պայմանագիրը (1997թ.) ու «Ռազմավարական գործընկերության» հռչակագիրը (2000 թ.)։ Հայաստանի անդամակցությունը ՀԱՊԿ-ին Է՛լ ավելի է ուժեղացրել նրա կախվածությունը Ռուսաստանից։ Ռազմական համագործակցությունը

կենտրոնացած էր համատեղ զորավարժությունների և վարժանքների վրա, որի շրջանակներում հայկական ստորաբաժանումները մասնակցում էին ՀԱՊԿ արագ արձագանքման ուժերի զորավարժություններին և վերապատրաստում էին անցնում ռուսական հաստատություններում: Համագործակցությունը հակաօդային պաշտպանության ոլորտում ևս կարևոր ուղղություն էր, որը արտահայտվում էր համատեղ զորավարժություններին Հայաստանի մասնակցությամբ, ինչն անհրաժեշտ էր՝ հաշվի առնելով Հայաստանի սահմանափակ կարողությունները անձնակազմի լայնածավալ վերապատրաստման համար:

Ռուսաստանից Հայաստան սպառազինության ամենամեծ մատակարարումը (1993-1996 թթ.) ներառում էր մի շարք ռազմական համակարգեր, ինչի հետևանքով հայկական զինված ուժերի բոլոր ճյուղերը մեծ կախվածություն ձեռք բերեցին Ռուսաստանից՝ մատակարարումների և սպասարկման հարցում: Այս մատակարարումների սուբսիդավորված բնույթն Է՛լ ավելի էր ամրապնդել այս կախվածությունը: Նման պայմաններով տրամադրված զենքը սովորաբար նվազեցնում է ստացողի ինքնավարությունը՝ ի տարբերություն գնված զենքերի (Կինսելլա, 1998թ.): Թեև այդ մատակարարումներից ուղղակի շահույթ չկա, ստացողի կախվածությունը դառնում է արժույթի ձև, որն ամրապնդում է մատակարարի գերիշխող դիրքը (Կատրինա, 1988թ.): Այս դինամիկան արտացոլում է սպառազինության միջազգային կախվածության «ֆեոդալական գերակայությունը» (Väyrynen, 1980թ.), երբ հաճախորդներն իրենց հույսը դնում են մեկ մատակարարի վրա: Ստացող պետության համար այն հանգեցնում է ինքնիշխանության քայքայման և մատակարարման խափանումների ռիսկի ճգնաժամերի ժամանակ, երբ անվտանգության սպառնալիքներն ամենալուրջն են (Կինսելլա, 1998թ.):

Ռուսաստանից Հայաստանի ռազմատեխնիկական կախվածությունը մեծացնելու որոշիչ գործոնը ԵՄ-ի, ԱՄՆ-ի և Կանադայի կողմից դրված ոչ պաշտոնական էմբարգոն էր: Սրանք այն երկրներն են, որոնք տիրապետում են ամենաառաջադեմ բարձր տեխնոլոգիական զենքերին:

Մինչ Ռուսաստանը զենք էր վաճառում և՛ Հայաստանին, և՛ Ադրբեջանին, Ադրբեջանը Իսրայելում և Թուրքիայում արևմտյան

զենքին այլընտրանքներ էր փնտրում: Հայաստանը, իր հերթին բախվելով Ղարաբաղյան չլուծված հակամարտությանը, չուներ նմանատիպ հնարավորություններ, ինչը ստիպեց նրան իր պաշտպանական կարիքների համար ավելի շատ ապավինել Ռուսաստանին:

2020 թվականի Ղարաբաղյան պատերազմում կրած պարտությունից ի վեր հայկական բանակը զգալի կորուստներ է կրել հատկապես խորհրդային-ռուսական հնացած սպառազինությամբ և տեխնիկայով պայմանավորված: Չնայած այս անհաջողությանը, Հայաստանը որոշել էր չդիվերսիֆիկացնել սպառազինության իր մատակարարներին՝ փոխարենը Ռուսաստանին կատարելով ևս մեկ նշանակալից պատվեր՝ 2021 թվականին ստորագրելով խոշոր պայմանագիր: Հայաստանը կարող էր պաշտպանական համագործակցության առումով շարունակել հենվել Ռուսաստանի վրա, եթե չլինեին երեք կարևոր գործոններ. Ռուսաստանի երկարատև ագրեսիան Ուկրաինայի դեմ, որը բացահայտեց նրա պաշտպանական արդյունաբերության խոցելիությունը, 2022 թվականի սեպտեմբերին Հայաստանի դեմ ադրբեջանական ագրեսիայի վերսկսումը և Հայաստանի ՀԱՊԿ դաշնակիցների՝ հատկապես Ռուսաստանի, տարակուսելի չեզոքությունը: Այս իրադարձություններն ի վերջո ստիպեցին Հայաստանին վերանայել ռազմական մատակարարման ռազմավարությունը:

2022 թվականի սեպտեմբերի սահմանային բախումները և դրա հետ կապված այլ բացասական զարգացումները ստիպեցին Հայաստանին բախվել ռուսական սպառազինության շուկայի անբավարարությանը: Այս մատակարարումների հուսալիությունը գնալով ավելի անորոշ է դառնում՝ հաշվի առնելով Ուկրաինայում Ռուսաստանի շարունակական և ծախսատար պատերազմը:

3. Հայաստանի առանցքային կախվածությունը Ռուսաստանից

3.1 Հայաստանի առևտուրը

Մինչև 1991 թվականը Հայաստանի տնտեսությունը ինտեգրված էր խորհրդային համակարգին, որտեղ գերիշխող դիրք էր զբաղեցնում Ռուսաստանը: ԽՍՀՄ-ում ձեռնարկությունների, բաշխիչ ցանցերի, տրանսպորտի ստանդարտացումը և ռուսաց լեզվի համատարած օգտագործումը տևական կախվածություններ և կառուցվածքային կապեր էին ստեղծել, որոնք պահպանվեցին Խորհրդային Միության փլուզումից հետո: Հետխորհրդային շրջանում Ռուսաստանը շարունակում էր հեգեմոնիա հաստատել նախկին հանրապետությունների նկատմամբ, մասնավորապես այնպիսի կառույցների միջոցով, ինչպիսին է ԵԱՏՄ-ն (Մաժիկեև և Էդվարդս, 2020 թ.): 2013-ին Հայաստանը Մոսկվայի ճնշման արդյունքում կտրուկ հրաժարվեց ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրից և միացավ Ռուսաստանի գլխավորած ԵԱՏՄ-ին, որն ընդգծեց Հայաստանի անվտանգային և տնտեսական կապերի անհրաժեշտությունը Ռուսաստանի հետ՝ հատկապես չլուծված Ղարաբաղյան հակամարտության լույսի ներքո:

Հայաստանի՝ դեպի ծով ելք չունեցող երկրի կարգավիճակը, Թուրքիայի և Ադրբեջանի հետ սահմանների շրջափակումը և արևմտյան պատժամիջոցների տակ գտնվող նրա հարավային հարևան Իրանը եզակի առևտրային միջավայր են ստեղծում, որտեղ Ռուսաստանը ավելի քիչ մրցակցություն է ունենում այլ պոտենցիալ առևտրային գործընկերներից, օրինակ՝ Եվրոպայից կամ Մերձավոր Արևելքի երկրներից, քանի որ տրանսպորտային ծախսերն այս ուղղություններում ավելի բարձր են:

2015 թվականին Հայաստանի մուտքը ԵԱՏՄ ամրապնդեց վերջինիս արտահանման կառուցվածքի կենտրոնացումը դեպի ռուսական շուկա: Սա հանգեցրել է դեպի Ռուսաստան արտահանման զգալի աճի՝ հատկապես հիմնական ապրանքների առումով, ինչպիսիք են թարմ արտադրատեսակները: Այս տեղաշարժն առաջնայնորեն

պայմանավորված էր կենսական ռեսուրսների տեսանկյունից Ռուսաստանից Հայաստանի կախվածությամբ, ինչպիսիք են էներգետիկան և հացահատիկը, ինչն էլ ավելի ամրապնդեց տնտեսական կապերը երկու երկրների միջև:

2022 թվականին Հայաստանը Ռուսաստան է արտահանել 2,36 միլիարդ ԱՄՆ դոլարի ապրանք, որոնցից հիմնական արտահանումը կազմել են հեռարձակման սարքավորումները (247 միլիոն դոլար), ավտոմեքենաները (237 միլիոն դոլար) և ալկոհոլային խմիչքները (236 միլիոն ԱՄՆ դոլար) (Տնտեսական բարդության ցուցիչ, 2022 թ.): Վերջին վեց տարիների ընթացքում դեպի Ռուսաստան Հայաստանի արտահանումն աճել է տպավորիչ տարեկան տեմպերով՝ 32,8% (Տնտեսական բարդության ցուցիչ, 2022 թ.)՝ 2017 թվականին 572 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 3,41 մլրդ ԱՄՆ դոլարի 2023 թվականին (Հայաստանի վիճակագրական կոմիտե, 2024 թ.): Այնուամենայնիվ, վերջին միտումները տեղաշարժի մասին են վկայում: Ակնկալվում է, որ 2024 թվականին Հայաստանի արտահանումը Ռուսաստան կնվազի, իսկ հունվարից ապրիլն արդեն գրանցվել է 21,4% անկում (Գրիգորյան, 2024 թ.):

Հայաստանի առևտրային կախվածությունը Ռուսաստանից պայմանավորվում է որոշ կարևոր պարենային ապրանքների գծով Հայաստանի սահմանափակ ինքնաբավությամբ, ինչն ընդգծում է վերջինիս ներքին արտադրական կարողությունների խոցելիությունը: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, օգտագործելով Հայաստանի վիճակագրական կոմիտեի տվյալները, սահմանել է Հայաստանին անհրաժեշտ 15 հիմնական պարենային ապրանքները (Վարդանյան և Մինասյան, 2022 թ.): Դրանցից շատերն ունեն 100%-ին մոտ ինքնաբավության գործակից, ինչը նշանակում է, որ դրանք կարող են ամբողջությամբ ծածկվել ներքին արտադրությամբ, իսկ որոշների ինքնաբավության մակարդակն ավելի ցածր է:[4]

[4] Բարձր ինքնաբավությամբ արտադրատեսակներից են կարտոֆիլը (101.1%), բանջարեղենը (103.9%), մրգերն ու հատապտուղները (98.2%), խաղողը (106.7%), ձուն (100.3%), ոչխարի և այծի միսը (100.4%) և ձուկը (100.4%): 143,7%): Ինքնաբավության ցածր մակարդակ ունեցողներն են հատիկաընդեղենը (37.3%), շաքարավազը (38%) և խոզի միսը (45.1%)

Այնուամենայնիվ, երկու կարևոր պարենային ապրանք ինքնաբավության շատ ցածր մակարդակ ունեն, որոնք նաև փորձագետների կողմից (օրինակ՝ 2-րդ և 3-րդ հարցվածները) նշվել են որպես պարենային անվտանգության հիմնական խոցելի կողմեր՝ ցորենը (24.4%) և բուսական յուղը (9%):

2023 թվականին Հայաստան ներմուծվող ցորենի 99,9%-ը ստացվել է Ռուսաստանից (343600 տոննա) (Հովհաննիսյան, 2024 թ.): Ներկայումս Հայաստանի ցորենի սպառման 75%-ը ներկրվում է Ռուսաստանից (հարցված 4), մինչդեռ Հայաստանում արտադրվող ցորենի ծավալը կազմում է սպառման ընդամենը 25%-ը (հարցված 4):

Ռուսաստանը շարունակում է գերիշխող դիրք զբաղեցնել հայկական արտահանման ոլորտում՝ Հայաստանի արտահանման մեջ նրա կայուն դիրքին նպաստող երեք հիմնական գործոններով: Նախ, ռուսական որակի ստանդարտներն ընդհանուր առմամբ այնքան խիստ չեն, որքան արևմտյան շուկաներինը և թույլ են տալիս ավելի ցածր չափանիշների արտադրանք: Սա հայ արտադրողների համար հնարաորություն է ստեղծում արտահանել ապրանքների ավելի լայն տեսականի՝ առանց արտադրության[5] էական բարելավման անհրաժեշտության: Երկրորդ, ռուս սպառողներն արդեն ծանոթ են հայկական արտադրանքին (հարցվածներ 1 և 3), ինչն այն ընկալունակ շուկա է դարձնում: Վերջապես, Հայաստանում ռուսերենի համատարած օգտագործումը հեշտացնում է հաղորդակցությունը և բիզնես գործարքները՝ նվազեցնելով լեզվական խոչընդոտները և օգտագործելով առկա ցանցերը (հարցված 3): Այս գործոններն ընդգծում են Հայաստանի արտադրական ստանդարտների, արտադրանքի շուկայավարման և մարդկային ռեսուրսների աջակցության անհրաժեշտությունը՝ Ռուսաստանից դուրս դեպի նոր շուկաներ ընդլայնվելու համար:

[5] հարցված 3-ն ընդգծել է, որ թեև անմշակ գյուղատնտեսական արտադրանքը ներկայումս չունի կենսունակ այլընտրանքներ ռուսական շուկայում, հզոր վերամշակող արդյունաբերության զարգացումը կարող է սահմանափակ այլընտրանքային շուկաներ բացել հայկական արտադրանքի համար: Վերամշակված ապրանքներն ավելի հեշտ են արտահանվում, ավելի քիչ են ենթակա փչացման և ավելի բարձր ավելացված արժեք են առաջարկում: Դրան հասնելը կպահանջի նոր շուկաների մանրակրկիտ ուսումնասիրություն և բարելավումներ ինչպես շուկայավարման, այնպես էլ արտադրանքի որակի մեջ:

3.2 Հայաստանի Էներգետիկան

Միջազգային էներգետիկ գործակալության 2023 թվականի Հայաստանի էներգետիկ պրոֆիլի համաձայն, սեփական էներգետիկ կարիքները բավարարելու համար Հայաստանը մեծապես կախված է Ռուսաստանից և տնտեսության ոչ մի այլ հատված նման կախվածության մակարդակ չի ցուցաբերում: Երկիրը ներմուծում է իր ածխաջրածինների ողջ ծավալը: Բնական գազը կազմում է Հայաստանի էներգիայի ներմուծման 80%-ը (2.147 մլն. տ. [6]2020 թվականի 2.8 մլն. տ.-ից), որին հաջորդում է բենզինը (2020 թվականին 0,63 մլն. տ.): 2023 թվականին Ռուսաստանը հանդիսացել է բնական գազի գերիշխող մատակարարը՝ մատակարարելով գազի 86,6%-ը, իսկ մնացած մասը ներմուծվել է Իրանից: Բացի այդ, Ռուսաստանը գրեթե մենաշնորհ ունի նավթի և միջուկային վառելիքի ներմուծման հարցում և վերահսկում է այնպիսի կարևոր ենթակառուցվածքներ, ինչպիսիք են գազատարները:

«Shell Global»-ը Հայաստանի էներգետիկ շուկայում նոր խաղացող է, որը բենզին է ներկրում Եվրոպայից և արդեն զբաղեցնում է շուկայի 7-8%-ը: Այն, որ «Shell»-ի բենզինի արժեքը 5-6%-ով ավելի թանկ է, քան ռուսականը (հարցված 4), բացատրվում է Ռուսաստանից ներմուծվող անմաքս և ԵՄ-ից ներկրվող ապրանքների վրա 6,5% մաքսատուրքով:

Թեև Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրությունը բավականին դիվերսիֆիկացված է և իրականացվում է ջերմային, հիդրո և ատոմային էլեկտրակայաններում, արտադրված էլեկտրաէներգիայի 79,65%-ը սպառվում է երկրի ներսում (Հայաստանի էլեկտրական ցանցեր, 2023 թ.): Այնուամենայնիվ, ջերմային և ատոմային կայանները կախված են համապատասխանաբար ներմուծվող գազից և ուրանից, որոնք երկուսն էլ հիմնականում մատակարարվում են Ռուսաստանից: Չնայած Հայաստանը էլեկտրաէներգիայի արտահանող է հանդիսանում, այդ էներգիայի մեծ մասը փոխանակվում է Իրանից բնական գազի հետ (Արմենպրես, 2024ա):

Հայաստանի էներգետիկ լանդշաֆտը առաջընթացի և մարտահրավերների խառը պատկեր է ներկայացնում:

[6] «մլն. տ»-ն վերաբերում է միլիոն տոննա նավթի համարժեքին:

2000-ից 2020 թվականներին երկրում էներգիայի սպառման կտրուկ աճ է նկատվել՝ զգալիորեն գերազանցելով համաշխարհային աճը, 136%՝ ի համեմատ համաշխարհային միջին հանդիսացող 36%-ի (Միջազգային էներգետիկ գործակալություն, 2023 թ.): Չնայած այս աճին, մեկ շնչին ընկնող էներգիայի սպառումը Հայաստանում մնում է համաշխարհային և եվրոպական միջինից ցածր (Ռիտչի և այլք., 2023թ.): Ներկայումս Հայաստանն ունի էլեկտրաէներգիայի արտադրության բավարար հզորություն իր ներքին կարիքները բավարարելու համար, սակայն ակնկալվում է, որ ամեն տարի պահանջարկը կավելանա երեք տոկոսով:

Երկրի էլեկտրաէներգիան հիմնականում արտադրվում է Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ), հիդրոէլեկտրակայանների և ջերմաէլեկտրակայանների կողմից, իսկ արևային էներգիան կազմում է ընդհանուր արտադրության երկու տոկոսից պակասը (Առևտրի միջազգային վարչություն, 2023 թ.):

Հայաստանի էներգետիկ քաղաքականությունը փոխվել է 2013 թվականից՝ սկսած Ազգային էներգետիկ անվտանգության հայեցակարգից, որն ուղղված է վառելիքի դիվերսիֆիկացմանը և հզորությունների ընդլայնմանը: 2021 թվականին հաստատված վերջին շրջանակային ծրագիրը ներառում է մինչև 2040 թվականը էներգետիկայի ոլորտի զարգացման ռազմավարական ծրագիրը և վերջինիս գործողությունների ծրագիրը (Հայաստանի Հանրապետություն, 2020 թ.):

Հայաստանի կառավարությունն արդեն սկսել է զարգացնել վերականգնվող էներգիայի աղբյուրները, որոնք կնպաստեն էներգիայի կայունությանը և կնվազեցնեն կախվածությունը ներմուծումից՝ այս նպատակին հասնելու համար (Միջազգային էներգետիկ գործակալություն, 2023թ.) առաջնահերթություն դարձնելով վերականգնվող էներգիայի աղբյուրների մասնաբաժնի ավելացումը (66% մինչև 2036թ.)՝ 191 ՄՎտ լրացուցիչ հիդրո, 500 ՄՎտ. քամու էներգիայի և 950 ՄՎտ արևային էներգիայի հզորությամբ: Մինչ Միջազգային էներգետիկ գործակալությունը (2023) նշում է, որ Հայաստանի փոքր հիդրոէներգետիկ ներուժը, որը կառավարության զարգացման առաջնահերթություն է, նշանակալի է, փորձագետները,

ինչպիսին է հարցված 2-ը, ասում են, որ հիդրոէներգետիկ ներուժին երկիրն արդեն հասել է: Թեև բնակավայրերի ջեռուցումն ու տրանսպորտը մեծապես կախված են բնական գազից, էներգիայի վերականգնվող աղբյուրների և մասնավորապես արևային էներգիայի զարգացումը կարող է ապագայում ջեռուցման և տրանսպորտի ոլորտներին հնարավորություն ընձեռել անցում կատարել վերականգնվող էլեկտրաէներգիայի:

3.3 Հայաստանի անվտանգային կախվածությունը Ռուսաստանից

Ռուսական սպառազինությանը այլընտրանք գտնելու անհրաժեշտությունն ակնհայտ դարձավ 2022 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի հարձակումներից և 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումներից հետո: Այս իրադարձությունները ստիպեցին Հայաստանին վերանայել իր ռազմավարությունը և գիտակցել բացառապես ռուսական զենքին ապավինելու սահմանափակումները:

Սա ավելի ընդգծվեց Ուկրաինայի դեմ Ռուսաստանի շարունակական ագրեսիայի շնորհիվ, որը բացահայտեց վերջիններիս պաշտպանական արդյունաբերության թերությունները և խաթարեց մատակարարումները, ինչն ուղեկցվեց Ադրբեջանի հետ հակամարտության շրջանում Հայաստանի ՀԱՊԿ դաշնակիցների, հատկապես Ռուսաստանի չեզոքությամբ:

2022 թվականի սեպտեմբերյան հարձակումներից հետո Հայաստանը ձգտել է ամրապնդել իր պաշտպանունակությունը՝ անմիջականորեն աշխատելով Հնդկաստանի և Ֆրանսիայի կառավարությունների հետ՝ պաշտպանական համագործակցություն հաստատելու և նրանց ձեռնարկություններից ռազմական տեխնիկա գնելու թույլտվություն ստանալու նպատակով: Բացի այդ, Հայաստանը ռազմական համագործակցության համաձայնագրեր է ստորագրել Չեխիայի և Հունաստանի հետ՝ ընդլայնելով իր պաշտպանական գործընկերությունը: Առաջընթաց է գրանցվել նաև Միացյալ Նահանգների հետ համագործակցության ոլորտում, մասնավորապես, այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ռազմական կրթությունը, խորհրդատվական աջակցությունը և համատեղ

զորավարժությունները՝ հայկական բանակի խաղաղապահ բրիգադի ներգրավմամբ:

Ռուսաստանի մասնաբաժինը Հայաստան զենքի ներմուծման մեջ ընդամենը չորս տարվա ընթացքում 96%-ից նվազել է մինչև 10%-ից էլ պակաս (Չուխուրան և այլք, 2024 թ.): Այս կտրուկ փոփոխությունն ընդգծում է սեփական անվտանգությունը բարելավելու նպատակով ավելի հուսալի աղբյուրներից զենք ձեռք բերելու Հայաստանի պատրաստակամությունը՝ նույնիսկ ավելի բարձր գներով: Մնացած 10%-ը կարող է պայմանավորված լինել նաև չմատակարարված զենքով, որի համար Հայաստանն արդեն վճարել է Ռուսաստանին՝ 2021թ. կնքված պայմանագրով:

Չնայած իր պաշտպանական գործընկերության դիվերսիֆիկացմանն ուղղված ջանքերին, Խորհրդա-ռուսական ռազմական ժառանգության հաղթահարման գործընթացը չի արագացել. հայկական բանակը շարունակում է մեծապես կախված լինել խորհրդա-ռուսական զենքից, որը դեռ երկար տարիներ կպահանջի ռուսական ստանդարտի զինամթերք, պահեստամասեր և բաղադրիչներ: Այս մատակարարումների պակասը կարող է էապես ազդել Հայաստանի պաշտպանունակության վրա, իսկ այդ կախվածության նվազեցումը զգալի ժամանակ, ֆինանսական ռեսուրսներ և նոր գործընկերների զգուշավոր ընտրություն կպահանջի:

Անցումը նոր ստանդարտներին և տրամաչափերին կապված է մի շարք խնդիրների հետ, այդ թվում՝ անձնակազմի վերապատրաստման և պաշտպանական նոր տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտության հետ: Այս փոփոխությունը համապարփակ բարեփոխումներ կպահանջի ամբողջ զինված ուժերում և ռազմավարական մոտեցում երկրի զարգացող պաշտպանական կարիքների բավարարման նպատակով մասնագետներ հավաքագրելու և պատրաստելու գործում: Այս անցումային շրջանում հայկական բանակը կարող է օգտագործել խառը՝ արևմտյան և խորհրդային-ռուսական զինատեսակներ: Այս համակցությունը կարող է բարդացնել բանակը միասնականացնելու ջանքերը և դժվարություններ ստեղծել առանց ռուս մասնագետների և ձեռնարկությունների աջակցության ռուսական տեխնիկայի պահպանման և վերանորոգման գործում:

Հայաստանը ռազմական համագործակցության պայմանագիր է կնքել Հնդկաստանի հետ, որը ռուսական ռազմական տեխնիկայի խոշոր օպերատոր է հանդիսանում, ինչպիսիք են՝ Սու-30 կործանիչները և զրահամեքենաները, որոնց մեծ մասն արտադրվում և սպասարկվում է հնդիկ մասնագետների կողմից: Հնդկաստանի փորձը կարող է օգտագործվել Հայաստանի պաշտպանության հարցում Ռուսաստանին փոխարինելիս: Նմանապես, Չեխիան, ունենալով ռուսական տեխնիկայի վերանորոգման և արդիականացման իր փորձը, կօգնի Հայաստանին սպասարկել իր գոյություն ունեցող ռուսական զենքը: Հայաստանի և Չեխիայի միջև վերջերս կնքված համաձայնագիրը ճանաչում է այս հնարավորությունը և նպատակ ունի լուծել ռուսական զենքի արդիականացման մարտահրավերները՝ միաժամանակ նվազեցնելով ռուսական մատակարարումներից կախվածությունը:

ԵՄ Եվրոպական խորհուրդը հավանություն է տվել Խաղաղության եվրոպական հիմնադրամի (ԵՀՀ) շրջանակներում Հայաստանի զինված ուժերին 10 մլն եվրոյի հատկացմանը, որն առաջինն է ԵՄ-Հայաստան հարաբերությունների համար: Դրա նպատակն է բարելավել ռազմական նյութատեխնիկական ապահովումը, քաղաքացիական պաշտպանությունը և փոխգործակցությունը միջազգային առաքելությունների հետ: Այն ներառում է գումարտակի չափով ստորաբաժանման համար նախատեսված տեղակայվող վրանային ճամբար՝ բարձրացնելով Հայաստանի ճկունությունը և ճգնաժամային արձագանքը: Սակայն միայն սա էական փոփոխություն չի ստեղծի: ԱՄՆ-ը նաև ընդլայնում է աջակցությունը Հայաստանին՝ կենտրոնանալով ռազմական կրթության և վերապատրաստման վրա: 2023 թվականի սեպտեմբերին և 2024 թվականի հուլիսին կայացած համատեղ զորավարժություններն ուղղված են խաղաղապահ և կայունության գործողություններում հայ-ամերիկյան համագործակցության բարելավմանը (Ռուպերտ, 2024թ.):

4. Առաջարկություններ

Դիվերսիֆիկացման ցանկացած ջանք, լինի դա առևտրի, էներգետիկայի կամ պաշտպանության ոլորտում, բարդ և դժվարին է:

Ռուսաստանի պարագայում Հայաստանի դիվերսիֆիկացիան կդիտվի որպես աշխարհաքաղաքական մարտահրավեր նրա տարածաշրջանային ազդեցությանը, և դա կունենա իր հետևանքներ (Միրզոյան, 2024թ.): Այսպիսով, Հայաստանի հաջողված դիվերսիֆիկացիան պետք է լինի աստիճանական՝ միևնույն ժամանակ ունենալով երկարաժամկետ և ռազմավարական բնույթ:

Հայաստանն այնպիսի դիրքում չէ, որպեսզի կարողանա անմիջական ընտրություն և փոփոխություններ իրականացնել: Միևնույն ժամանակ, Երևանը կանգնած է տարբերակների սղության առջև, որոնք անհրաժեշտ է ճանաչել և դիտարկել: Հայաստանի պարագայում քաղաքական որոշումները միշտ պետք է հաշվի առնեն հետևանքները անվտանգության համար, քանի դեռ Ադրբեջանը շարունակում է ագրեսիվ, մաքսիմալիստական քաղաքականություն վարել Հայաստանի նկատմամբ:

Հայաստանը պահանջում է հստակ տեսլական, որը կկամրջի անջրպետը ռեալպոլիտիկի անհրաժեշտության և առկա քաղաքական սահմանափակումներից դուրս գալու ցանկության միջև: Անհրաժեշտ է երկարաժամկետ ռազմավարություն, որը կխրախուսի ավելի ինտեգրված մոտեցում, որտեղ տարբեր պետական կառույցները կարող են լրացնել միմյանց՝ աշխատելով կոնկրետ նպատակների ուղղությամբ: Մոտեցումը նպատակ կհետապնդի ակտիվորեն դիվերսիֆիկացնել դաշինքները, ամրապնդել տնտեսական կարողությունները և նպաստել Հայաստանի դիմակայունությունը բարձրացնող քաղաքական բարեփոխումներին:

4.1 Առևտրային կախվածությանվազեցման վերաբերյալ առաջարկություններ

Համաշխարհային բանկի խմբի աջակցության օրինակների հիման վրա առևտրի դիվերսիֆիկացիան դառնում է առանցքային լուծում: Այս մոտեցումը ներառում է՝ (i) արտահանման դիվերսիֆիկացում (նոր կամ բարելավված ապրանքների ներմուծում նոր շուկաներ) և (ii) ներքին

արտադրության դիվերսիֆիկացում (Համաշխարհային բանկ, 2019 թ.): Դրան հասնելու համար առաջարկվում է հետևյալը.

- Լուծել պարենային անվտանգության հարցը

Հատկապես հացահատիկի սեփական արտադրության մեջ ներդրումներ կատարելով՝ երկիրը կարող է նվազեցնել այս առանցքային կախվածությունը, ամրապնդել ինքնաբավությունը և ստեղծել ավելի ճկուն սննդի մատակարարման շղթա: Տեղական արտադրողների համար պետական սուբսիդիաները թույլ կտան հայկական հացահատիկին մրցակցել ռուսական ներմուծման հետ թե՛ գնի, թե՛ որակի առումով՝ բարձրացնելով ներքին պարենային անվտանգությունը (հարցված 4):

Առաջարկություններ.

- Սուբսիդավորել հացահատիկի արժեքի 30%-ը հայաստանյան արտադրողների համար, որպեսզի տեղական հացահատիկը մրցունակ լինի ռուսական ներմուծման հետ:[7]
- Օգտագործել Հայաստանում 50% չմշակվող հողատարածքները՝ խթանելով ներքին արտադրությունը և նվազեցնելով ներմուծումից կախվածությունը:

Բացահայտել և զարգացնել արտահանման նոր շուկաներ

Նոր շուկաներ մուտք գործելու համար հայ արտադրողներից պահանջվում է խորապես հասկանալ սպառողների տարբեր կարիքները և համապատասխանաբար հարմարեցնել իրենց արտադրանքի դիզայնը: Այս գործընթացը երկարաժամկետ ռազմավարական մտածողություն է պահանջում և կարող է կարճաժամկետ զոհաբերություններ պահանջել, ինչպիսիք են՝

[7] Ներկայումս հայկական սուբսիդիաները կազմում են գյուղատնտեսության ՀՆԱ-ի ընդամենը 3%-ը՝ ԵՄ-ում 30%-ի և ԱՄՆ-ի 45%-ի համեմատ (հարցված 4):

կայուն աճի և կայունության հասնելու նպատակով եկամուտների կրճատումը (հարցված 2): Նպատակը պետք է լինի առևտրի, էներգետիկայի և անվտանգության աղբյուրների դիվերսիֆիկացումը, ոչ թե այդ նպատակների համար Ռուսաստանից հրաժարվելը:

Քանի որ հայ արտադրողներին կարող է դժվար լինել համոզել այլընտրանքային շուկաներ փնտրել և հեռանալ իրենց հարմարավետության գոտուց, Հայաստանի կառավարությունը պետք է առաջնորդող դեր ստանձնի այս գործընթացում և աջակցի տեղական արտադրողներին նոր շուկաներ մուտք գործելու հարցում (հարցված 3): Շուկայի դիվերսիֆիկացման հնարավորություններն ընդլայնելու նպատակով Հայաստանը պետք է առաջնահերթություն տա մարդկային կապիտալի մեջ ներդրումներին: Սա ներառում է նոր շուկաների ուսումնասիրություն, միջազգային չափանիշներին համապատասխանում և վերամշակման տեխնոլոգիաների նորարացումը: Չնայած Հայաստանի չափերով պայմանավորված, այս փոփոխությունը կարող է մարտահրավեր լինել, սակայն այն չափազանց կարևոր է տնտեսական կայունության համար և պահանջում է հանձնառություն ինչպես արտահանողների, այնպես էլ կառավարության կողմից (հարցված 3):

Հայկական արտադրողները պետք է՝

- Հասկանան սպառողների բազմազան կարիքները նոր շուկաներում, հատկապես Եվրոպայում և Մերձավոր Արևելքում, և համապատասխանաբար հարմարեցնեն արտադրանքի դիզայնը: Օրինակ՝ դիտարկեն կոնյակի արտադրության կրճատումը հօգուտ գինու արտադրության ավելացման: Գինին, լինելով շուկաում լայն տարածում ունեցող արտադրանք, ավելի հեշտ մուտք կունենա այս նոր շուկաներ (հարցված 4):
- Բաց լինեն երկարաժամկետ ռազմավարական մտածողությանը, նույնիսկ եթե դա նշանակում է եկամուտների կարճաժամկետ կորուստներ հանուն կայուն աճի (հարցված 3):

- Դիվերսիֆիկացնեն առևտրի, էներգետիկայի և անվտանգության աղբյուրները, սակայն սա չի նշանակում պարտադիր կերպով հրաժարվել Ռուսաստանից:
- Ներդրումներ կատարեն մարդկային կապիտալում՝ բարելավելու շուկայի դիվերսիֆիկացման հնարավորությունները, ներառյալ միջազգային չափանիշներին համապատասխանելը և վերամշակման տեխնոլոգիաների նորարարությունները, ինչպես նաև նոր արտադրանքի մշակումը:
- Հայաստանի կառավարության հետ համատեղ ծավալուն վերամշակող արդյունաբերություն զարգացնեն՝ գյուղատնտեսական արտադրանքն ավելի արտահանելի դարձնելու, պակասելու ռիսկը նվազեցնելու և դրանց արժեքը բարձրացնելու նպատակով:
- Նոր շուկաներ հաջող մուտք գործելու համար հասկանան դրանց կարգավորող և սպառողական լանդշաֆտները:

Հայաստանի կառավարությունը պետք է՝

- Առաջնորդի ջանքերը՝ աջակցելու տեղական արտադրողներին նոր շուկաներ զարգացնելու գործում:
- Ամրապնդի առևտրային կապերը Պարսից ծոցի տարածաշրջանի, մասնավորապես ԱՄԷ-ի հետ և աջակցություն տրամադրի տեղական արտադրողներին՝ դիմակայելու այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են սահմանափակ գործարար կապերը, լեզվական խոչընդոտները և այլ արտահանողների մրցակցությունը,
- Ներդնի անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ինչպիսիք են հուսալի օդային տրանսպորտը, և արագացնի հիմնական ճանապարհային ենթակառուցվածքների կառուցումը, ինչը կարող է հեշտացնել առևտուրն ինչպես հարևան երկրների, այնպես էլ այլ երկրների հետ,
- Փոխհատուցի տեղական արտադրողների լոգիստիկ ծախսերը՝ հեշտացնելով գյուղատնտեսական և այլ ապրանքների արտահանումը (հարցված 4),
- Բանակցի տարանցման վճարների նվազեցման շուրջ՝ Իրանի միջով Ծոցի երկրներ անցնելու համար (հարցված 4):

4.2 Էներգետիկայի դիվերսիֆիկացման վերաբերյալ առաջարկություններ

Հայաստանը էներգիայի աղբյուրների դիվերսիֆիկացումը համարում է իր էներգետիկ անվտանգության քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը: Չնայած գրանցված առաջընթացին՝ իրականացումը դեռևս շարունակում է վաղ փուլերում մնալ, և հետագա ջանքեր են անհրաժեշտ դիվերսիֆիկացման նոր ուղիներ ուսումնասիրելու և առկա ջանքերը բարելավելու համար:
Ներկայիս գլոբալ միջավայրը մարտահրավերներ է ստեղծում աղքատ, փոքր, դեպի ծով ելք չունեցող և/կամ ռեսուրսներից կախված երկրների համար, ուստի կարելի է դիվերսիֆիկացման մի շարք նոր ուղիներ փնտրել:

Դիվերսիֆիկացնել ածխաջրածինների մատակարարումները

- Իրանից գազի ներկրման մեծացում՝ ավելացնելով խողովակաշարի ճնշումը, ինչը Իրանի մասնաբաժինը կբարձրացնի պոտենցիալ 1,2-ից մինչև 1,7 խորանարդ մետր (հարցված 3): Գազպրոմի հայկական դուստր ձեռնարկությանը պատկանող գազատարների գնում՝ ռուսական պետական ընկերությունից կախվածությունը նվազեցնելու և այդ ջանքերի համար արևմտյան գործընկերներից ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով (հարցված 4):

Ընդլայնել տարածաշրջանային էներգետիկ ինտեգրումը

- Բարձրավոլտ հաղորդման գծերի կառուցում Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան ուղղությունների միջև՝ Հյուսիս-Հարավ էներգետիկ միջանցքին միանալու համար (հարցված 3),

- Վրաստանի հետ էլեկտրացանցերի սինքրոնացում՝ նպաստելով էլեկտրաէներգիայի փոխանցմանը և ցանցի կայունության բարելավմանը (հարցվածներ 1, 2 և 3):

Խթանել ներքին էներգիայի արտադրությունը

- Գոյություն ունեցող էլեկտրակայանների արդիականացում՝ հզորություններին համապատասխան մատակարարումը մեծացնելու նպատակով: Նոր ատոմակայանի ստեղծման համար գործընկերոջ որոնումների արագացում. դիտարկվել են մի քանի երկրներ, ուստի ժամանակն է որոշում կայացնելու և առաջ շարժվելու:
- Վերականգնվող էներգիայի հզորության ընդլայնում՝ կենտրոնանալով արևային էներգիայի վրա: Արևային էներգիայի ավելցուկային արտադրության արտահանման ներուժի ուսումնասիրում:

Բարելավել էներգաարդյունավետությունը

- 2020 թվականին մշակված էներգաարդյունավետության գործողությունների երկրորդ ազգային ծրագրում նախանշված միջոցառումների իրականացում:
- Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ընդունման խրախուսում ինչպես բնակելի շենքերում, այնպես էլ արդյունաբերական ոլորտում:
- Էներգախնայողության խթանման նպատակով հանրային իրազեկման արշավների մշակում:

Ներդրումներ կատարել ենթակառուցվածքներում

- Արտադրական հզորությունների զարգացում էներգիայի աճող պահանջարկը բավարարելու համար:
- Ենթակայանների և էլեկտրահաղորդման գծերի լայնածավալ վերակառուցում՝ էներգիայի բաշխման արդյունավետությունն ու հուսալիությունը բարելավելու համար:

4.3 Անվտանգության դիվերսիֆիկացման վերաբերյալ առաջարկություններ

Դիվերսիֆիկացնել ռազմատեխնիկական գործընկերությունները

- Ռազմատեխնիկական համաձայնագրերի խորացում Հնդկաստանի և Չեխիայի հետ, որոնք ունեն ռուսական զենքի շարունակական սպասարկմանն աջակցելու կարողություններ և փորձ: Ի վերջո, ընդլայնում այս երկրների սահմաններից դուրս՝ կենտրոնանալով առաջադեմ ռազմական տեխնոլոգիաներով և հզոր պաշտպանական արդյունաբերությամբ երկրների վրա՝ հաշվի առնելով ծախսերի և օգուտների վերլուծությունը:

Կառավարել խորհրդային-ռուսական սարքավորումներից անցումը

- Խորհրդային-ռուսական ռազմական տեխնիկայի աստիճանական փոխարինում տարբեր աղբյուրներից ստացվող նոր տեխնոլոգիաներով՝ օպերատիվ բացերից խուսափելու նպատակով ապահովելով փուլային մոտեցում:
- Անցումային ծրագրի մշակում՝ կառավարելու ռուսական և արևմտյան զենքերի համակեցությունը, ներառյալ փոխգործունակության միջոցառումները և խառը տեխնոլոգիաների պահպանման ռազմավարությունները՝ որպես մոդել օգտագործելով Ուկրաինայի փորձը:

Ապահովել գոյություն ունեցող սարքավորումների մատակարարումների շարունակականությունը

- Ռազմավարական գործընկերության միջոցով ռուսական ստանդարտների զինամթերքի, պահեստամասերի և

բաղադրիչների հասանելիության ապահովում՝ խուսափելով մեկ աղբյուրից կախվածությունից:

- Հնդկաստանի և Չեխիայի հետ առկա համաձայնագրերի օգտագործում՝ աջակցելու խորհրդային-ռուսական տեխնիկայի սպասարկմանն ու շահագործմանը՝ մինչև ամբողջական անցում կատարելը:

Իրականացնել զինված ուժերի համապարփակ բարեփոխումներ

- Զինված ուժերում համապարփակ բարեփոխումների իրականացում՝ նոր չափանիշներին և գործառնական պահանջներին համապատասխանելու նպատակով:
- Աշխատանքի ընդունման և վերապատրաստման ռազմավարական մոտեցման մշակում՝ կենտրոնանալով նոր պաշտպանական տեխնոլոգիաների և համակարգերի համար անհրաժեշտ հմտությունների վրա:

Տեխնոլոգիական ինտեգրման պլան

- Նոր ռազմական տեխնոլոգիաների և ստանդարտների ինտեգրման մանրամասն պլանների ստեղծում, ներառյալ անձնակազմի վերապատրաստումը և օպերատիվ ընթացակարգերի թարմացումը:
- Ռազմավարությունների իրականացում՝ դեպի նոր տրամաչափեր և համակարգեր անցումը կառավարելու նպաակով՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով խափանումները և պահպանելով մարտական պատրաստվածությունը:

Հղումներ

Adam, C., & Cobham, D. (2007). Modelling multilateral trade resistance in a gravity model with exchange rate regimes. *Centre for Dynamic Macroeconomic Analysis Conference Papers 2007*, *CDMC07/02*. https://www.st- andrews.ac.uk/~wwwecon/CDMA/papers/cp0702.pdf

ARLIS. (1997, Օգոստոսի 29). *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*. ARLIS. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18532

Armenian Electric Networks. (2023). *Armenia's Energy Network in 2022*. Armenian Electric Networks. https://energyagency.am/uploads/page/pdfs/energy%20balance%202022%20ARM.png

Armenpress. (2024a, January 15). *Armenian Exports to EEU hit $3.3 billion but expert warns against 'illusions'*. Armenpress. https://armenpress.am/en/article/1127998

Armenpress. (2024b, February 12). *Armenia, Iran Could Soon Enhance Energy Swap Deal.* Armenpress. https://armenpress.am/en/article/1130111

ArmInfo. (2024b, August 7). *In 2023, Armenia slightly reduced the import of oil products, despite the several times increase in exports*. Armenia in Numbers. https://finport.am/full_news.php?id=50907&lang=1

ArmInfo. (2024a, August 7). *In 2023, the supply of Russian liquefied natural gas to Armenia increased significantly, while the supply of natural gas decreased moderately*. Armenia in Numbers. https://finport.am/full_news.php?id=50913&lang=1

Asia Pacific Energy Research Centre. (2007). *A Quest for Energy Security in the 21st Century*. chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://aperc.or.jp/file/2010/9/26/APE RC_2007_A_Quest_for_Energy_Security.pdf

Catrina, C. (2021). *Arms Transfers and Dependence*. Taylor & Francis Group. https://www.taylorfrancis.com/books/mono/10.4324/9781003176091/arms-transfers- dependence-christian-catrina

Chervyakov, D., & Giucci, R. (2023). *Armenia's economic exposure to Russia: recent developments*. German Economic Team.

Chukhuran, N., Minasyan, N., & Muradyan, V. (2024, July 31). *A Shift Away From Russia*. German Marshall Fund. https://www.gmfus.org/news/shift-away-russia
Civilnet. (2023, November 7). *Հայ աստանի կախվածու թյ ունը ռուսական շուկայ ից կտրու կ ավել ացել է*. Civilnet. https://www.civilnet.am/news/756176/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D 5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%AF%D5%A1%D5%AD%D5%BE%D5%A1%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B 5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%BC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B7%D5%B8%D6%82%D5%AF%D5%A1%

Climate Policy Info Hub. (2024). Mtoe. https://climatepolicyinfohub.eu/glossary/mtoe.html
Dovich, M., & Sookiasian, P. V. (2023, November 15). Karabakh, gas for electricity, corridors: Exclusive with Iran's ambassador - CIVILNET. *Civilnet.am*. https://www.civilnet.am/en/news/756939/karabakh-gas-for-electricity-corridors- exclusive-with-irans-ambassador/
Fitch Ratings. (2024, January 26). *Fitch Affirms Armenia at 'BB-'; Outlook Stable*. Fitch Ratings. Retrieved August 23, 2024, from https://www.fitchratings.com/research/sovereigns/fitch-affirms-armenia-at-bb- outlook-stable-26-01-2024
Grigoryan, A. (2024, June 20). Exports from Armenia to Russia and the EU have decreased. *ArmenPress*. https://armenpress.am/hy/article/1194080
Hovhannisyan, A. (2024, August 7). Russia continues to be the main supplier of wheat, flour and corn to Armenia. *ArmInfo*. https://finport.am/full_news.php?id=50910&lang=1
International Energy Administration (2023, November 29). Armenia: Country Commercial Guide. https://www.trade.gov/country-commercial-guides/armenia-energy#:~:text=Armenia%20has%20sufficient%20electricity%2Dgenerating,hydroelectric%20plants%2C%20and%20thermal%20plants
IMF. (2024). In *Economic Diversification in Developing Countries: Lessons from Country Experiences with Broad-Based and Industrial Policies*. International Monetary Fund.

International Atomic Energy Agency. (2021, September 6). *IAEA Concludes Long Term Operational Safety Review at the Armenian Nuclear Power Plant*. https://www.iaea.org/newscenter/pressreleases/iaea-concludes-long-term-operational- safety-review-at-the-armenian-nuclear-power-plant
International Energy Agency. (2023, March). *Armenia Energy Profile*. https://iea.blob.core.windows.net/assets/55834e18-f66e-4642-aed2-7ebff9c54c2c/ArmeniaEnergyProfile.pdf
International Energy Agency. (2023, March 24). *Energy Security*. International Energy Agency. Retrieved June 8, 2024, from https://www.iea.org/topics/energy-security Kinsella, D. (1998). Arms Transfer Dependence and Foreign Policy Conflict. *Journal of Peace Research*, *35*(1), 7-23. https://www.jstor.org/stable/425228
Malmlöf, T. (2017). Russia's Arms Exports: Successes and Challenges. *Revue Défense Nationale*, (802), 64-71. https://www.cairn.info/revue-defense-nationale-2017-7-page- 64.htm
Mazhikeyev, A., & Edwards, T. H. (2020). Post-colonial trade between Russia and former Soviet republics: back to big brother? *Economic Change and Restructuring*, *54*, 877–918. https://link.springer.com/article/10.1007/s10644-020-09302-8
Mirzoyan, A. (2024, June 25). Russia Warns Expanded E.U. - Armenia Relations Will Have "Consequences". *Russia Warns Expanded E.U. - Armenia Relations Will Have "Consequences"*. https://hetq.am/en/article/167640
Nazaretyan, H. (2023, July 7). Armenia's Economic Dependence on Russia: How Deep Does It Go? *EVN Report*. civilnet.am/en/news/757077/no-business-as-usual-with- azerbaijan-until-progress-on-peace-with-armenia-says-us/

Nazaretyan, H. (2024, August 8). Armenia Looks to the Arab World. *EVN Report*. https://evnreport.com/politics/armenia-looks-to-the-arab-world/
Observatory of Economic Complexity. (2022). *Armenia (ARM) and Russia (RUS) Trade*. The Observatory of Economic Complexity. Retrieved August 27, 2024, from https://oec.world/en/profile/bilateral-country/arm/partner/rus
OECD - World Bank. (2019). *Economic Diversification: Lessons From Practice*. World Trade Organization. chrome-

extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.wto.org/english/res_e/bo oksp_e/aid4trade19_chap5_e.pdf
Pracht, A. (2024, August 2). Armenia sets up company to draft roadmap for new nuclear power plant. *Civilnet*. https://www.civilnet.am/en/news/791050/armenia-sets-up- company-to-draft-roadmap-for-new-nuclear-power-plant/
Presidential Office of the Republic of Armenia. (2013, October 23). *Energy Security Concept of the Republic of Armenia*. ARLIS. https://policy.asiapacificenergy.org/sites/default/files/Concept%20of%20the%20Energy %20Security%20of%20the%20Republic%20of%20Armenia_2013%20%28ARM%29%20.p df
Public Services Regulatory Commission of the Republic of Armenia. (2022). *Գազամատակարարման համակարգի 2022 թվականի հիմնական ցուցանիշների վերաբերյալ* . psrc.am. https://www.psrc.am/uploads/files/Բնական%20գազ/Հաշվետվու թյունների/2022/4- er/ardir5.pdf
The Republic of Armenia. (2020). *The RoA Energy Sector Development Strategic Program to 2040*. RoA Government Decree. https://energyagency.am/public/uploads/news/pdf/EnergyStrategy_angleren.pdf?fbclid =IwAR3Yf9Vbt2UVcJrqvmD_Y9heyktnvJ-ydSPQa5tCrhNe6iLVWZCBKglJ3Do

RFE/RL Azatutyun. (2023, November 29). *Russia Defends Curbs On 'Toxic' Food Imports From Armenia*. https://www.azatutyun.am/a/32706811.html

Ritchie, H., Rosado, P., & Roser, M. (2023). Data Page: Primary energy consumption per capita. In *Energy*. https://ourworldindata.org/grapher/per-capita-energy-use
Rupert, A. (2024, July 16). *Eagle Partner 24 kicks off, strengthening US-Armenia ties*. Army.mil. Retrieved August 26, 2024, from https://www.army.mil/article/278062/eagle_partner_24_kicks_off_strengthening_us_a rmenia_ties
Saribekyan, G. (2024, July 18). *Russia Curbs Agricultural Imports From Armenia*. https://www.azatutyun.am/a/33041769.html
Statistical Committee of Armenia. (2024). *FOREIGN SECTION Export and import of goods*. Statistical Committee of Armenia.

https://armstat.am/file/article/sv_12_23a_411.pdf Statistical Committee of the Republic of Armenia. (n.d.). *Foreign Trade Database 2017- 2023*. Արտաքին առևտրի տվյալների բազա. https://armstat.am/am/?nid=717&thid%5B%5D=0&years%5B%5D=2023&years%5B%5D =2019&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC
Statistical Committee of the Republic of Armenia. (2021). *Energy Report of the Republic of Armenia 2021*. https://armstat.am/file/doc/99535988.pdf
Statistical Committee of the Republic of Armenia. (2022). *ARMENIA ENERGY FACTSHEET 2022*. ARMENIA ENERGY FACTSHEET 2022. chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://armstat.am/file/doc/99544448. pdf
Statistical Committee of the Republic of Armenia. (2022). *External Sector*. https://www.armstat.am/file/article/sv_12_22r_411.pdf
Statistical Committee of the Republic of Armenia. (2023). *Agriculture, Forestry, and Fishing*. SOCIO-ECONOMIC SITUATION OF THE REPUBLIC OF ARMENIA in 2023.

JANUARY-DECEMBER. https://armstat.am/file/article/sv_12_23a_122.pdf Stepanyan, R. (2024, January 16). Armenia Reports First Delivery Of 'Delayed' Russian Weapons. *Ազատություն Ռադիոկայան*. https://www.azatutyun.am/a/32776633.html UNCTAD. (2019). *Trade dependence, liberalization and exports diversification in developing countries*. Trade dependence, liberalization and exports diversification in developing countries. chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://unctad.org/system/files/official- document/ser-rp-2018d2_en.pdf
Vardanyan, T., & Minasyan, S. (2022). *Food Security Issues of the Republic of Armenia*. asue.am. https://asue.am/upload/files/science/banber/2022-year-6/4.pdf
Vayrynen, R. (1980). Economic and Political Consequences of Arms Transfers to the Third World. *Alternatives*, *6*(6), 131-155.
World Bank. (2019). *ECONOMIC DIVERSIFICATION: LESSONS FROM PRACTICE*. World Bank. Retrieved May 10, 2024, from chrome-

extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.wto.org/english/res_e/bo oksp_e/aid4trade19_chap5_e.pdf
Yannis, A. (2002). The Concept of Suspended Sovereignty in International Law and its Implications in International Politics. *European Journal of International Law*, *13*(5), 1037- 1052. https://watermark.silverchair.com/131037.pdf?token=AQECAHi208BE49Ooan9kkhW_Ercy7Dm3ZL_9Cf3qfKAc485ysgAAA08wggNLBgkqhkiG9w0BBwagggM8MIIDOAIBADCCAzEGCSqGSIb3DQEHATAeBglghkgBZQMEAS4wEQQMs0s6v5uhfcaRhlkdAgEQgIIDAiAQHdDk mJfpzNjh85Lgm0-XLbrNlprJM2EmGklLixBU5leaE

Հարցազրույցներ փորձագետների հետ

հարցված 1, նախկին պաշտոնյա և տնտեսական զարգացման փորձագետ: Հարցազրույցն անց է կացվել 2024 թվականի մայիսի 16-ին:

հարցված 2, էներգետիկ փորձագետ ԱՄՆ կառավարության խոշոր կապալառու ընկերությունում: Հարցազրույցն անց է կացվել 2024 թվականի հունիսի 5-ին:

հարցված 3, տնտեսագետ և տնտեսական ռիսկերի գնահատման կազմակերպության ղեկավար. Հարցազրույցն անց է կացվել 2024 թվականի հունիսի 11-ին:

հարցված 4, Նախկին բարձրաստիճան պաշտոնյա, ով ծանոթ է կառավարության տնտեսական զարգացման ռազմավարությանը: Հարցազրույցն անց է կացվել 2024 թվականի 3-ը սեպտեմբերին: